Սույն հետազոտությունը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ, «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի ,«Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ի և «Ագորա Սենթրլ Յուրոփ» ՀԿ-ի (Չեխիա) հետ համագործակցաբար գործարկվող «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում «Բիզնես և Կրթություն Ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Սոցիալական աջակցության ոլորտի բյուջեի մոնիթորինգ և վերլուծության իրականացում» ծրագրի շրջանակներում:

Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Բիզնես և Կրթություն Ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Սոցիալական աջակցության ոլորտի «Անապահով և կյանքի դժվարին իրավիճակում սոցիալական խմբերին աջակցություն» բյուջետային ծրագրի արդյունքային ցուցանիշների գնահատում և դրանց բարելավմանն ուղղված առաջարկությունների ներկայացում

Սոցիալական աջակցության ոլորտի «Անապահով և կյանքի դժվարին իրավիճակում սոցիալական խմբերին աջակցություն» (1011) բյուջետային ծրագրի՝ սոցիալական պաշտպանության համակարգի առանցքային բաղադրիչներից մեկի, նպատակն է օժանդակել անապահով ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանը՝ միաժամանակ մեղմելով աղքատությունը և կրճատելով ծայրահեղ աղքատությունը:
Ծրագրի միջոցառումների կազմի փոփոխությունները տարբեր տարիներին արտահայտում են ինչպես սոցիալ-տնտեսական միջավայրի զարգացումները, այնպես էլ սոցիալական քաղաքականության ռազմավարական առաջնահերթությունների վերանայումները: Նոր միջոցառումների ներդրումը, գործողների վերաձևակերպումը կամ դադարեցումը հնարավորություն են տալիս գնահատելու պետության արձագանքը նոր սոցիալական խնդիրներին:

Սույն հետազոտությունը ընդգրկել է «Անապահով և կյանքի դժվարին իրավիճակում սոցիալական խմբերին աջակցություն» (1011) բյուջետային ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր)՝

- վերջնական արդյունքի նկարագրի,
- Ծրագրում ընդգրկված միջոցառումների անվանումների, դրանց նկարագրությունների,
- վերջնական և ուղղակի արդյունքային չափորոշիչների ուսումնասիրությունը և դրանց որակի գնահատումը:

2026թ. պետական բյուջեով սոցիալական աջակցության ծրագրին նախատեսվել է հատկացնել **25,307,015.1 հազ. դրամ,** ինչը կազմում է սոցիալական պաշտպանության **բյուջեի ծախսերի 2.55%-ը:** Նախորդ տարվա համեմատ ծրագրի ֆինանսավորումն աճել է 8,1%-ով:

Ծրագիրը և դրանում ներառված միջոցառումները մշակվել են՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2021թ. օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 4-րդ՝ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի 4.6 ենթաբաժնի առաջին և երկրորդ պարբերություններով սահմանված նպատակները, որոնք ուղղված են սոցիալական կարիքի գնահատման և դրան համաչափ սոցիալական ծառայություններ տրամադրելու սկզբունքի վրա հիմնված սոցիալական աջակցության քաղաքականության իրականացմանը՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և աղքատ ընտանիքների կարողությունների և հմտությունների զարգացման միջոցով:

Ծրագրի նպատակը և վերջնական արդյունքը

- **Ծրագրի նպատակն է՝** Օժանդակել անապահով ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանը:
- **Վերջնական արդյունքի նկարագիրը՝** Աղքատության մեղմում և ծայրահեղ աղքատության կրճատում:
- **Վերջնական արդյունքի չափորոշիչը՝** Ծածկույթ բնակչությունից, %, որի ելակետային ցուցանիշ է սահմանված 12%, թիրախային ցուցանիշը՝ ոչ ավելի 16%:

Վերջնական արդյունքի ցուցանիշները պետք է բխեն ինչպես ռազմավարություններից, այնպես էլ կառավարության այլ ծրագրերից, միջազգային համաձայնագրերից և միջազգային այլ պարտավորություններից: Այս առումով 1011 բյուջետային ծրագրի վերջնական արդյունքի չափորոշիչը և ցուցանիշը մշակված է ծրագրային ձևաչափով բյուջեի կազմման ՀՀ ֆինանսների նախարարության կողմից սահմանված մեթոդաբանական պահանջներին համապատասխան:

Ծրագրի միջոցառուները. անվանումներ և նկարագրություններ

«Անապահով և կյանքի դժվարին իրավիճակում սոցիալական խմբերին աջակցություն» (1011) ծրագրում ընդգրկված են 14 միջոցառումներ, որոնցից 13-ը ընթացիկ միջոցառումներ են, այդ թվում՝ 7 ծառայությունների մատուցման և 6 տրանսֆերտների տրամադրման, իսկ 1-ը՝ կապիտալ բնույթի:

ՀՀ ֆինանսների նախարարի 2017թ. հունիսի 23-ի №311-Ա հրամանի հավելված 1-ով հաստատված «Ծրագրային բյուջետավորման ձևաչափով ծրագրերի և միջոցառումների սահմանման մեթոդական ձեռնարկի»[1] համաձայն՝

[1] Հղում՝ https://minfin.am/website/images/website/311-A.pdf

- «Միջոցառման անվանումը պետք է առաջին հայացքից ընդհանուր պատկերացում տա միջոցառման շրջանակներում պետության միջամտության ձևի վերաբերյալ և թույլ տա հստակ տարբերակել այն բյուջետային ծրագրի այլ միջոցառումներից»,
- «Միջոցառման անվանումը պետք է ձևակերպվի մեկ արտահայտությամբ և լինի հնարավորինս հակիրճ և տեղեկացնող»,
- «Միջոցառման նկարագրությունը հակիրճ ձևով (1-2 նախադասությամբ) նկարագրում է տվյալ միջոցառման շրջանակներում պետության կողմից իրականացվող միջամտության հիմնական առանձնահատկությունները: Այն պետք է հստակեցնի միջոցառման շրջանակները»:

Ստորև աղյուսակ 1-ում ներկայացված են Ծրագրի բոլոր միջոցառումների անվանումները և նկարագրությունները, որոնց ուսումնասիրության արդյունքներով կարող ենք փաստել, որ որոշ միջոցառումների անվանումները չեն համապատասխանում վերը նշված պահանջներին՝ շատ հակիրճ են, սակայն տեղեկացնող չեն կամ բավականին երկար են: Նման խնդիր առկա է նաև միջոցառումների նկարագրությունների դեպքում: Առկա է նաև գրեթե ամբողջությամբ նույն ձևակերպումը միջոցառման և՛ անվանման և՛ նկարագրության համար:

Աղյուսակ 1. 2026թ. 1011 ծրագրով իրականացվող միջոցառումների անվանումները և նկարագրությունները.

Հ/հ	Դասիչ	Միջոցառման անվանումը /նկարագրությունը
1	11001	**Միջոցառման անվանումը** Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների իրականացման ապահովում
		Միջոցառման նկարագրությունը Ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված, ընդգրկված անապահով ճանաչված ընտանիքներին նպաստի, սոցիալական նպաստի և հրատապ օգնության վճարման ծառայությունների ձեռքբերում
2	11003	**Միջոցառման անվանումը** Սոցիալական դեպքի վարման ծառայության ձեռք բերում
		Միջոցառման նկարագրությունը Ընտանիքի, դրա յուրաքանչյուր անդամի, սոցիալական գնահատման իրականացում անապահով սոցիալական խմբերին հայտնաբերելու համար սոցիալական աջակցության տարածքային մարմինների սոցիալական աշխատողների կողմից տնային այցելությունների միջոցով
3	11005	**Միջոցառման անվանումը** Սոցիալական շտապ օգնություն
		Միջոցառման նկարագրությունը Արագ արձագանքման ապահովում
4	11007	**Միջոցառման անվանումը** Սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման ծառայությունների տրամադրում
		Միջոցառման նկարագրությունը

		Սոցբնակ. ֆոնդի շենք. բնակ. իրավունք ունեցող անձանց սոցաջակց. ծրագր. շրջանակ. օրենսդր. սահմանվ. ծառ. մատուցում բազմաբն. սոց.բնակ. ֆոնդի շենքերի պահպան., տեխ. սպասարկ. և սոցաջակց. ծրագր. նախատեսվ. բնաիր. օգնութ. պահպան. և բաշխման աշխատ. կազմում
5	**11008**	**Միջոցառման անվանումը** Ժամանակավոր կացարաններում բնակվող փախստականների կենցաղային խնդիրների լուծման միջոցառումների իրականացում
		Միջոցառման նկարագրությունը Կացարաններում սանիտարահիգիենիկ պայմանների, ընդհանուր օգտագործման էլեկտրաէներգիայի, ջրմուղ-կոյուղու ծախսերի փոխհատուցում, ինչպես նաև այդ կացարանների պահպանման աշխատանքերի կազմակերպում
6	**11009**	**Միջոցառման անվանումը** Անօթևան անձանց կացարանով ապահովում
		Միջոցառման նկարագրությունը Անօթևան անձանց կացարանով ապահովում ժամանակավոր օթևաններում՝ ընդհանուր տիպի, հատուկ (մասնագիտացված), ընդունիչ-ախտորոշիչ կենտրոնում, ճգնաժամային կենտրոններում
7	**11010**	**Միջոցառման անվանումը** Սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում
		Միջոցառման նկարագրությունը ՀՀ մարզերում և Երևան քաղաքում սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպման ծառայության տրամադրում
8	**12001**	**Միջոցառման անվանումը** Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ
		Միջոցառման նկարագրությունը Ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված, անապահով ճանաչված ընտանիքներին նպաստի, սոցիալական նպաստի և հրատապ օգնության տրամադրում
9	**12007**	**Միջոցառման անվանումը** Սոցիալական բնակարանային ֆոնդի կացարաններում բնակվող միայնակ կենսաթոշակառուներին սպառած բնական գազի, էլեկտրական էներգիայի և ջրամատակարարման վարձավճարների փոխհատուցում
		Միջոցառման նկարագրությունը Սոց. բնակ. ֆոնդի կացարաններում բնակվող միայնակ կենսաթոշակառուներին տարեցներին կամ հաշմանդամություն ունեցող սոց. անապահով խմբերի կոմունալ ծախսերի դիմաց դրամական փոխհատուցում ծառայություն տրամադրող կազմակերպություններին:
10	**12008**	**Միջոցառման անվանումը** Բնակչության սոցիալական պաշտպանության պետական և պետության կողմից ուղղորդմամբ հաստատությունների (մանկատների) շրջանավարտներին դրամական աջակցություն
		Միջոցառման նկարագրությունը ՀՀ-ում գործող երեխաներին շուրջօրյա խնամք տրամադրող բն. սոց. պաշտպանության պետական հաստատությունների (մանկատների) 18 տարին լրացած և հաստատությունից դուրս գրված շրջանավարտների դրամական աջակցության տրամադրում նվազագույն ամսական աշխատավարձի չափով:
11	**12009**	**Միջոցառման անվանումը**

		Բնակչության սոցիալական պաշտպանության պետական հաստատությունների (մանկատների) շրջանավարտներին բնակելի տարածության վարձավճարի հատուցում:
		Միջոցառման նկարագրությունը ՀՀ-ում գործող երեխաներին շուրջօրյա խնամք տրամադրող բն. սոց. պաշտպանության պետական հաստատությունների (մանկատների) 18 տարին լրացած և հաստատությունից դուրս գրված շրջանավարտների բնակելի տարածության վարձավճարի հատուցման տրամադրում:
12	**12010**	**Միջոցառման անվանումը** ՀՀ-ում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց վարձակալությամբ բնակարանների ձեռքբերման ծախսերի փոխհատուցման տրամադրում:
		Միջոցառման նկարագրությունը ՀՀ-ում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց բնակարաններ վարձակալելու համար փոխատուցման տրամադրում առավելագույնը 6 ամիս ժամկետով, յուրաքանչյուր ամսվա համար 60000 ՀՀ դրամի չափով:
13	**12011**	**Միջոցառման անվանումը** ՀՀ վերադարձող քաղաքացիների վերաինտեգրմանն ուղղված առաջնային ծրագիր
		Միջոցառման նկարագրությունը ՀՀ-ում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց բնակարաններ վարձակալելու համար փոխատուցման տրամադրում առավելագույնը 6 ամիս ժամկետով, յուրաքանչյուր ամսվա համար 60000 ՀՀ դրամի չափով:
14	**32001**	**Միջոցառման անվանումը** Սոցիալական բնակարանային ֆոնդի շենքերի վերանորոգում
		Միջոցառման նկարագրությունը Սոցիալական բնակարանային ֆոնդի շենքերի թվով 4 շենքների վերանորոգում՝ սոցիալական բնակարանային ֆոնդի շահառուներին սպասարկելու համար:

Աղյուսակ 1-ի տվյալների վերլուծության արդյունքներով մասնավորապես կարելի է նշել հետևյալ անճշտությունները և սահմանված պահանջներին անհամապասխանությունները՝

- «Սոցիալական դեպքի վարման ծառայության ձեռք բերում» (11003) միջոցառման նկարագրությունը կարիք ունի խմբագրման, քանի որ միջոցառման առկայության անհրաժեշտությունը պարզ չի ձևակերպված:
- «Սոցիալական շտապ օգնություն» (11005) միջոցառման անվանումը հակիրճ է ձևակերպված, սակայն այն տեղեկացնող չէ, պատկերացում չի տալիս միջոցառման իրականացման ձևի մասին: Նույն խնդիրն է միջոցառման նկարագրության պարագայում:
- «Սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման ծառայությունների տրամադրում» (11007) միջոցառման նկարագրությունը շատ երկար է, ներկայացված է բառերի կրճատումներով, ինչը ոլորտին ոչ լավ ծանոթ անձանց համար հասկանալի չէ և կարող է թյուրըմբռնման տեղիք տալ:
- «Ժամանակավոր կացարաններում բնակվող փախստականների կենցաղային խնդիրների լուծման միջոցառումների իրականացում» (11008) միջոցառման վերնագիրը շատ ընդյանրական է, չի համապատասխանում միջոցառման

նկարագրությանը, քանի որ կենցաղային խնդիրների լուծումը սահմանափակվում է սանիտարահիգիենիկ պայմանների, ընդհանուր օգտագործման էլեկտրաէներգիայի և ջրմուղ-կոյուղու ծախսերի փոխհատուցմամբ:

- «Սոցիալական բնակարանային ֆոնդի կացարաններում բնակվող միայնակ կենսաթոշակառուներին սպառած բնական գազի, էլեկտրական էներգիայի և ջրամատակարարման վարձավճարների փոխհատուցում» (12007) միջոցառման անվանումը գրեթե նույնությամբ կրկնվում է նկարագրության մեջ:
- Ծրագրում ընդգրկված 2 միջոցառումներ (12009 և 12010) վերաբերում են սոցիալական տարբեր խմբերի անձանց բնակարաններ վարձակալելու համար փոխատուցման տրամադրմանը, սակայն միջոցառոմներում ձևակերպումները տարբեր են՝ «բնակելի տարածության վարձավճարի հատուցում», «վարձակալությամբ բնակարանների ձեռքբերման ծախսերի փոխհատուցման տրամադրում»:
- «ՀՀ վերադարձող քաղաքացիների վերաինտեգրմանն ուղղված առաջնային ծրագիր» (12011) միջոցառման նկարագրությունը չի համապատասխանում անվանմանը՝ նկարագրությունը վերաբերում է ՀՀ-ում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց:

Արդյունքային չափորոշիչներ

ՀՀ ՖՆ Մեթոդական ձեռնարկի համաձայն՝

- Միջոցառումների կամ ծառայությունների (ուղղակի) արդյունքներն այն արդյունքներն (ապրանքներն ու ծառայություններն) են, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն տրամադրվում են արտաքին շահառուներին:
- Արտաքին շահառուներն են հանրությունը, քաղաքացիները, ԱԺ-ն, կառավարությունը, այլ պետական մարմինները, պետական և մասնավոր կազմակերպությունները:
- Պետական մարմնի կողմից ուղղակիորեն մատուցվող ծառայությունները այն ծառայություններն են, որոնք «արտադրվում» կամ տրամադրվում են անմիջականորեն պետական մարմնի աշխատակազմի կողմից, օգտագործելով այդ աշխատակազմի համար նախատեսված ռեսուրսները (գույք, էլեկտրաէներգիա, աշխատավարձ, և այլն):
- Պետական մարմնի կողմից անուղղակիորեն մատուցվող ծառայությունները պետական մարմինը գնում է շահառուների համար այլ կազմակերպություններից, պետական բյուջեից իրեն հատկացվող միջոցների հաշվին:
- Ուղղակի արդյունքի չափորոշիչները, որպես կանոն ուղղակիորեն վերահսկվում են միջոցառման համար պատասխանատու մարմնի կողմից:

Ծրագրի բոլոր միջոցառումների համար 2026թ. մշակված են **57 ոչ ֆինանսական ուղղակի արդյունքի չափորոշիչներ,** այդ թվում՝ 52 քանակական, 3 որակական և 2 ժամկետային ցուցանիշներ: Որակական և ժամկետային չափորոշիչները միասին կազմում են միայն 8.7%-ը, ինչը սահմանափակում է ծրագրի արդյունավետության ամբողջական գնահատման հնարավորությունը:

Ստորև աղյուսակ 2-ում ներկայացված են Ծրագրի բոլոր միջոցառումների անվանումները և արդյունքային ոչ ֆինանսական չափորոշիչները, որոնց ուսումնասիրության արդյունքներով կարող ենք փաստել, որ որոշ միջոցառումների արդյունքային չափորոշիչները չեն համապատասխանում վերը նշված պահանջներին և վերանայման և բարելավման, ինչպես նաև նոր ցուցանիշների մշակման կարիք ունեն:

Աղյուսակ 2. 2026թ. 1011 ծրագրով իրականացվող միջոցառումների արդյունքային ոչ ֆինանսական չափորոշիչները

Հ/հ	Դասիչ	Միջոցառման անվանումը /նկարագրությունը
1	11001	**Միջոցառման անվանումը** Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների իրականացման ապահովում
		Արդյունքային չափորոշիչները **Քանակական** ➢ Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ ստացող ընտանիքների թիվ, հատ ➢ Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ ստացող ընտանիքների կազմում բջջային հեռախոսով նույնականացման ապահովման ընտանիքների թիվ, հատ
2	11003	**Միջոցառման անվանումը** Սոցիալական դեպքի վարման ծառայության ձեռք բերում
		Արդյունքային չափորոշիչները **Քանակական** ➢ Այցելությունների թիվը, այդ թվում՝ ➢ Այցելությունների թիվը (ՀՀ քաղգ), այդ թվում՝ ○ Ընտանիքի սոցիալական գնահատման համակարգում ○ Զբաղվածության պետական ծրագրերի համակարգում ○ Հաշմանդամության գնահատման համակարգում ➢ Այցելությունների արդյունքում սոցիալական ծառայություն ստացած ընտանիքների (անձանց) թիվ, այդ թվում՝ ○ Այցելությունների արդյունքում սոցիալական ծառայություն ստացած ՀՀ ընտանիքների (անձանց) թիվ ○ ԼՂ ընտանիքների թիվ, հատ ցուցանիշ սահմանված չէ **Որակական** ➢ Գնահատված կարիքների թիվ տոկոս, տունայցերի նկատմամբ
3	11005	**Միջոցառման անվանումը** Սոցիալական շտապ օգնություն
		Արդյունքային չափորոշիչները **Քանակական** ➢ Ընտանիքների թիվ, հատ, այդ թվում՝ ➢ ՀՀ ընտանիքների թիվ, հատ ➢ ԼՂ ընտանիքների թիվ, հատ ցուցանիշ սահմանված չէ
4	11007	**Միջոցառման անվանումը** Սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման ծառայությունների տրամադրում
		Արդյունքային չափորոշիչները **Քանակական**

		➢ Սոցիալական բնակարանային ֆոնդում ներառված կառույցների թիվ, այդ թվում՝ ա/ շենքերի թիվ, այդ թվում ○ Բնակարանների թիվ բ/ առանձնատների թիվ գ/ առանձին բնակարանների թիվը ➢ Սոցիալական բնակարանային ֆոնդում ներառված կառույցներում բնակվող անձանց (ընտանիքների) թիվ, այդ թվում՝ ○ Սոցիալական բնակարանային ֆոնդում ներառված կառույցներում բնակվող ՀՀ անձանց (ընտանիքների) թիվ ○ Սոցիալական բնակարանային ֆոնդում ներառված կառույցներում բնակվող ԼՂ անձանց (ընտանիքների) թիվ
5	**11008**	**Միջոցառման անվանումը** Ժամանակավոր կացարաններում բնակվող փախստականների կենցաղային խնդիրների լուծման միջոցառումների իրականացում
		Արդյունքային չափորոշիչները **Քանակական** ➢ Կացարաններում ապրող փախստականների թիվ, մարդ **Որակական** ➢ Կացարաններում ընդհանուր օգտագործման էլեկտրաէներգիայի ծախսերի տեսակարար կշիռը փոխհատուցվող գումարում, տոկոս ➢ Կացարաններում ջրմուղ-կոյուղու ծախսերի տեսակարար կշիռը փոխհատուցվող գումարում, տոկոս
6	**11009**	**Միջոցառման անվանումը** Անօթևան անձանց կացարանով ապահովում
		Արդյունքային չափորոշիչները **Քանակական** ➢ Կացարանով ապահովման ծառայություն ստացող անօթևան անձանց թիվ՝ մարդ, այդ թվում ○ Կին ○ Տղամարդ ○ Ակդ թվում՝ հաշմանդամություն ուվեցող
7	**11010**	**Միջոցառման անվանումը** Սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում
		Արդյունքային չափորոշիչները **Քանակական** ➢ Շահառուների թիվ, անձ (ՀՀ) ➢ Շահառուների թիվ, անձ (ԼՂՀ)
8	**12001**	**Միջոցառման անվանումը** Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ
		Արդյունքային չափորոշիչները **Քանակական** ➢ Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ ստացող ընտանիքների թիվ, հատ, այդ թվում՝ ○ Նպաստ ստացող անդամների թիվ, այդ թվում՝ ▪ Նպաստ ստացող ՀՀ անդամների թիվ ցուցանիշ սահմանված չէ ▪ Նպաստ ստացող ԼՂ անդամների թիվ ցուցանիշ սահմանված չէ

9	**12007**	**Միջոցառման անվանումը** Սոցիալական բնակարանային ֆոնդի կացարաններում բնակվող միայնակ կենսաթոշակառուներին սպառած բնական գազի, էլեկտրական էներգիայի և ջրամատակարարման վարձավճարների փոխհատուցում
		Արդյունքային չափորոշիչները **Քանակական** ➢ Աջակցություն ստացած անձանց թիվ, մարդ
10	**12008**	**Միջոցառման անվանումը** Բնակչության սոցիալական պաշտպանության պետական և պետության կողմից ուղղորդմամբ հաստատությունների (մանկատների) շրջանավարտներին դրամական աջակցություն
		Արդյունքային չափորոշիչները **Քանակական** ➢ Շրջանավարտների թիվը, հատ ➢ Ամսական վարձավճարի չափը, հազ. դրամ
11	**12009**	**Միջոցառման անվանումը** Բնակչության սոցիալական պաշտպանության պետական հաստատությունների (մանկատների) շրջանավարտներին բնակելի տարածության վարձավճարի հատուցում:
		Արդյունքային չափորոշիչները **Քանակական** ➢ Շրջանավարտների թիվը, հատ ➢ Ամսական վարձավճարի չափը, հազ. դրամ
12	**12010**	**Միջոցառման անվանումը** ՀՀ-ում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց վարձակալությամբ բնակարանների ձեռքբերման ծախսերի փոխհատուցման տրամադրում:
		Արդյունքային չափորոշիչները **Քանակական** ➢ Բնակարաններ վարձակալելու նպատակով փոխհատուցում ստացող ընտանիքների թիվ, ընտանիք **Ժամկետային** ➢ Փոխհատուցման տրամադրման առավելագույն տևողություն, ամիս ➢ Փոխհատուցման ամսական չափ, հազար դրամ
13	**12011**	**Միջոցառման անվանումը** ՀՀ վերադարձող քաղաքացիների վերաինտեգրմանն ուղղված առաջնային ծրագիր
		Արդյունքային չափորոշիչները **Քանակական** ➢ Բնակարաններ վարձակալելու նպատակով փոխհատուցում ստացող ընտանիքների թիվ, ընտանիք **Ժամկետային** ➢ Փոխհատուցման տրամադրման առավելագույն տևողություն, ամիս Փոխհատուցման ամսական չափ, հազար դրամ
14	**32001**	**Միջոցառման անվանումը** Սոցիալական բնակարանային ֆոնդի շենքերի վերանորոգում
		Արդյունքային չափորոշիչները **Քանակական**

		➢ Շենքերի թվաքանակ ➢ ք. Արտաշատ Մռավյան փողոց 32/1 ➢ Սյունիքի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոններ ➢ Հրազդանի նախկին քրեակատարողական հիմնարկի շենք ➢ ք. Դիլիջան Գոլովինո թաղամաս, Կամոյի փ.,137-րդ շենք

Աղյուսակ 2-ով ներկայացված չափորոշիչների վերլուծության արդյունքներով մասնավորապես կարելի է նշել հետևյալ անճշտությունները և անհամապասխանությունները սահմանված պահանջներին ՝

Ծառայությունների մատուցման միջոցառումներ

- «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների իրականացման ապահովում» (11001) միջոցառման «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ ստացող ընտանիքների կազմում բջջային հեռախոսով նույնականացման ապահովման ընտանիքների թիվ, հատ» չափորոշիչը, չնայած 2026թ.-ի համար ցուցանիշ չի սահմանված, երկար ձևակերպում ունի և ներկայացված է որպես քանակական ցուցանիշ, որը ավելի հասկանալի կլինի տոկոսային արտահայտությամբ սահմանելու դեպքում՝ որպես ծածկույթի ցուցանիշ:
- «Սոցիալական դեպքի վարման ծառայության ձեռք բերում» (11003) միջոցառման համար մշակված գրեթե բոլոր 12 քանակական չափորոշիչների ձևակերպումները բարելավման կարիք ունեն՝ ընդհանրական են և անհասկանալի հանրության գերակշիռ մեծամասնության համար:
- «Սոցիալական շտապ օգնություն» (11005) միջոցառման համար մշակված է 3 քանակական չափորոշիչ, սակայն ո՛չ միջոցառման անվանումից, ո՛չ նկարագրությունից, ո՛չ էլ ցուցանիշներից հասկանալի չէ տվյալ միջոցառման նպատակը և բնույթը, իրականացման եղանակը:
- «Սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման ծառայությունների տրամադրում» (11007) միջոցառման 4 քանակական չափորոշիչները վերաբերում են սոցիալական բնայֆոնդում ներառված կառույցների, այդ կառույցներում բնակվող ընտանիքների թվի մասին տեղեկատվությանը: Մշակված չեն որակական և ժամկետի ցուցանիշներ:

  Միաժամանակ, սոցիալապես անապահով ընտանիքներին կացարանի տրամադրման ծառայությունն իր մեջ ներառում է բնակարանի և յուրաքանչյուր ընտանիքի սոցիալական կարիքին համապատասխան համալիր սոցիալական ծառայությունների փաթեթի տրամադրման, ինչպես նաև բնաիրային օգնության պահպանման և բաշխման գործառույթներ, որոնց վերաբերյալ արդյունքային որևէ ցուցանիշ մշակված չէ:
- «Ժամանակավոր կացարաններում բնակվող փախստականների կենցաղային խնդիրների լուծման միջոցառումների իրականացում» (11008) մշակված 3 չափորոշիչներց 2-ը վերաբերում են ընդհանուր օգտագործման էլեկտրաէներգիայի և

ջրմուղ-կոյուղու ծախսերի տեսկարար կշիռներին փոխհատուցվող գումարում, որոնք բավարար չեն փախստականների կենցաղային կարիքների լուծման մասին պատկերացում կազմելու և ժամանակավոր կացարաններում բնակվող փախստականների կենցաղային խմդիրների լուծման արդյունավետության մակարդակի մասին:

- «Անօթևան անձանց կացարանով ապահովում» (11009) միջոցառման համար մշակված են միայն քանակական չափորոշիչներ՝ ժամանակավոր կացարաններում բնակվող անձանց թվի մասին: Ժամանակավոր օթևանը կազմակերպում է շահառուների հետևյալ ծառայությունները՝ բնաիրային օգնություն՝ սննդի, հիգիենայի միջոցների, հագուստի, կոշիկի ձևով, բժշկական օգնություն և սպասարկում, սոցիալ-հոգեբանական օգնություն, խորհրդատվական օգնություն, այլ համարժեք սոցիալական ծառայություններ՝ որոնց վերաբերյալ որևէ արդյունքային չափորոշիչ մշակված չէ:
- «Սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում» (11010) միջոցառման համար մշակված են 2 քանակական չափորոշիչներ՝ ՀՀ-ի և ԼՂ-ի շահառուների թվի վերաբերյալ, բացակայում են որակական չափորոշիչները՝ գնահատելու համար մատուցվող ծառայության արդյունավետությունը կամ շահառուների գոհունակությունը:

Տրանսֆերտների տրամադրման միջոցառումներ

- Տրանսֆերտների տրամադրման «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» (12001), «Սոցիալական բնակարանային ֆոնդի կացարաններում բնակվող միայնակ կենսաթոշակառուներին սպառած բնական գազի, էլեկտրական էներգիայի և ջրամատակարարման վարձավճարների փոխհատուցում» (12007) և «Բնակչության սոցիալական պաշտպանության պետական և պետության կողմից ուղղորդմամբ հաստատությունների (մանկատների) շրջանավարտներին դրամական աջակցություն» (12008) միջոցառումների համար մշակված քանակական չափորոշիչները վերաբերում են շահառուների թվաքանակին:
- «Բնակչության սոցիալական պաշտպանության պետական և պետության կողմից ուղղորդմամբ հաստատությունների (մանկատների) շրջանավարտներին բնակելի տարածության վարձավճարի հատուցում» (12009) միջոցառման արդյունքային չափորոշիչ է սահմանված ամսական վարձավճարի չափը, իսկ որպես ժամկետի չափորոշիչ՝ փոխհատուցման տրամադրման ամիսների թիվը:
- «ՀՀ-ում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց վարձակալությամբ բնակարանների ձեռքբերման ծախսերի փոխհատուցման տրամադրում» (12010) և «ՀՀ վերադարձող քաղաքացիների վերաինտեգրմանն ուղղված առաջնային ծրագիր» (12011) միջոցառումների համար մշակված են ինչպես շահառուների թիվը, այնպես էլ փոխհատուցման ամսական չափը և փոխհատուցման տրամադրման առավելագույն

տևողությունը: Այս չափորոշիչների համապատասխան ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունները ներառված են նաև միջոցառումների նկարագրությունների մեջ, ուստի ցուցանիշների կարևորությունը նվազում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն հետազոտության շրջանակներում իրականացված վերլուծությունը նպատակ ուներ գնահատել սոցիալական աջակցության ոլորտի «Անապահով և կյանքի դժվարին իրավիճակում սոցիալական խմբերին աջակցություն» 1011 բյուջետային ծրագրի կառուցվածքային և բովանդակային համապատասխանությունը ծրագրային բյուջետավորման մեթոդաբանությանը, ինչպես նաև բացահայտել դրա արդյունքահենության և արդյունավետության բարձրացման հնարավորությունները: Վերլուծությունը հիմնվել է ինչպես ծրագրի ձևակերպումների, այնպես էլ «Սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման ծառայություններ» միջոցառման 2025 թվականի առաջին կիսամյակի մոնիթորինգի արդյունքների վրա:

Վերլուծության արդյունքում արձանագրվել է, որ 1011 բյուջետային ծրագիրը հիմնականում կազմվում է ծրագրային բյուջետավորման գործող մեթոդական ուղեցույցների պահանջներին համապատասխան, սակայն դրա միջոցառումների ձևակերպման և արդյունքային ցուցանիշների մշակման գործընթացը դեռևս կրում է ձևական բնույթ և լիարժեք չի արտացոլում արդյունքահեն կառավարման տրամաբանությունը: Մասնավորապես՝

- միջոցառումների անվանումների և նկարագրությունների ձևակերպումները մի շարք դեպքերում չեն ապահովում հստակություն և տեղեկատվական ամբողջականություն. առկա են ինչպես չափազանց հակիրճ, այնպես էլ անհամաչափ երկար ձևակերպումներ, ինչպես նաև անվանման և նկարագրության կրկնություններ, ինչը նվազեցնում է ծրագրի վերլուծական արժեքը և դժվարացնում միջոցառումների համադրելիությունը,
- առանձին միջոցառումների շրջանակում սահմանված արդյունքային ցուցանիշները ամբողջական չեն և չեն ընդգրկում տվյալ միջոցառման շրջանակում իրականացվող բոլոր գործառույթները, գենդերազգայուն ցուցանիշների բացակայությունը ևս սահմանափակում է ծրագրի ազդեցության համապարփակ գնահատման հնարավորությունը,
- արդյունքային ցուցանիշների համակարգը հիմնականում Ներկայում գործող ցուցանիշների համակարգը արձանագրում է ծառայությունների ծավալը (շահառուների թիվ, տրամադրված ծառայությունների քանակ), սակայն չի գնահատում, թե որքան արդյունավետ են օգտագործվում բյուջետային միջոցները այդ արդյունքների հասնելու համար: Արդյունքում ծրագրի իրական սոցիալական ազդեցությունը՝ աղքատության

նվազեցման, սոցիալական ներառման կամ շահառուների ինքնուրույնության բարձրացման տեսանկյունից, չի չափվում ամբողջական և համակարգված ձևով:

Մոնիթորինգի և հաշվետվության գործող մեխանիզմները հիմնականում արձանագրում են ծառայությունների մատուցման փաստը և ծավալը, սակայն բավարար չափով չեն գնահատում դրանց արդյունավետությունն ու երկարաժամկետ արդյունքները: Սա վկայում է այն մասին, որ ծրագրի ռազմավարական նպատակների և միջոցառումների միջև առկա է ոչ բավարար հստակեցված արդյունքային կապ, ինչի հետևանքով բարդանում է սոցիալական քաղաքականության իրական ազդեցության գնահատումը:

Հատկապես սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման միջոցառման օրինակով ակնհայտ է, որ անհրաժեշտ է ընդլայնել ցուցանիշների համակարգը՝ ներառելով ոչ միայն բնակարանների զբաղվածության մակարդակը կամ շահառուների քանակը, այլև սպասման ցուցակների դինամիկան, ծառայությունների որակը, օրենսդրությամբ սահմանված սոցիալական ծառայությունների մատուցումը, շահառուների գոհունակությունը և կայուն բնակարանային լուծումների ապահովումը: Նման ցուցանիշների ներառումը կբարձրացնի միջոցառման կառավարման արդյունավետության գնահատելիությունը:

Միաժամանակ, ծրագրում գրեթե բացակայում է ծախս–արդյունք հարաբերակցության գնահատման բաղադրիչը: Մինչդեռ ծրագրային բյուջետավորման կարևորագույն սկզբունքներից է բյուջետային միջոցների արդյունավետ օգտագործման գնահատումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է միջոցառումների մշակման ընթացքում կիրառել ծրագրի տրամաբանական շղթայի ամբողջական մոտեցումը՝ հստակ սահմանելով նպատակի, արդյունքի, ծառայության և ցուցանիշի միջև կապը: Արդյունքային ցուցանիշները նպատակահարմար է համալրել որակական և ազդեցության չափորոշիչներով, ինչպես նաև սահմանել չափման հստակ ժամանակային հեռանկար (օրինակ՝ 6 կամ 12 ամիս հետո գնահատվող արդյունքներ):

Ծրագրի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ներդնել մեկ շահառուի հաշվով, մեկ լուծված սոցիալական դեպքի հաշվով կամ մեկ վերաինտեգրված շահառուի հաշվով ծախսի ցուցանիշների ներդրումը, ինչը հնարավորություն կտա գնահատել ծրագրի արժեք–արդյունք հարաբերակցությունը և բարձրացնել ֆինանսական հաշվետվողականությունը:

Առաջարկվում է նաև մշակել սոցիալական աջակցության ոլորտի արդյունքային ցուցանիշների միասնական մեթոդաբանական շրջանակ, որը կապահովի ցուցանիշների համադրելիությունը, չափման միատեսակությունը և ժամանակային շարունակականությունը: Սա հնարավորություն կտա ձևավորել տվյալահեն կառավարման մշակույթ և բարձրացնել որոշումների կայացման որակը:

Մասնագիտական կարողությունների զարգացումը ևս առանցքային նշանակություն ունի: Ծրագրային բյուջետավորման, արդյունքային ցուցանիշների մշակման և մոնիթորինգի ոլորտներում նպատակային վերապատրաստումները կարող են նպաստել մեթոդաբանական մոտեցումների միատեսակ կիրառմանը և ծրագրի որակական բարելավմանը:

Ամփոփելով՝ կարելի է եզրակացնել, որ 1011 բյուջետային ծրագիրը ունի ինստիտուցիոնալ և մեթոդաբանական հիմք արդյունքահեն կառավարման զարգացման համար, սակայն պահանջում է խորացված բովանդակային վերանայում՝ ռազմավարական նպատակների, միջոցառումների և արդյունքային ցուցանիշների միջև հստակ և չափելի կապ ապահովելու նպատակով: Առաջարկվող բարելավումները կարող են կիրառվել 2027 թվականի բյուջետային գործընթացի շրջանակում՝ ապահովելով փուլային ներդրում և գնահատելի արդյունքներ:

Արդյունքում ծրագիրը կարող է վերածվել ոչ միայն սոցիալական ծառայությունների մատուցման գործիքի, այլ նաև սոցիալական քաղաքականության արդյունավետության գնահատելի և տվյալահեն կառավարման մոդելի, որը կնպաստի աղքատության նվազեցման, սոցիալական ներառման և հասարակության առավել խոցելի խմբերի կայուն զարգացման ապահովմանը:

Ստորև ներկայացվում են սոցիալական աջակցության ոլորտի 1011 ծրագրի որոշ միջոցառումների առաջարկվող նոր արդյունքային չափորոշիչների որոշ օրինակներ՝

- 1011-12001 «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ»
  - Նպաստ ստացող ընտանիքների տեսակարար կշիռը, որոնց սոցիալական անապահովության միավորը նվազել է (%)
  - անապահովության նվազագույն ցուցանիշների բարելավում արձանագրած նպաստ ստացող ընտանիքների տեսակարար կշիռը (%)

- 1011-11003-«Սոցիալական դեպքի վարման ծառայության ձեռքբերում»
  - Դեպքի վարման արդյունքում լուծված կամ մասամբ լուծված սոցիալական դեպքերի տեսակարար կշիռը սոցաջակցության ոլորտի արդյունքային ցոցանիշների շիռը (%)
  - Դեպքի վարման ավարտից հետո կրկնակի դիմումների կրճատման թիվը (%)
- 1011-11008-«Ժամանակավոր կացարաններում բնակվող փախստականների կենցաղային խնդիրների լուծման միջոցառումների իրականացում»
  - Կացարաններում բնակության միջին փաստացի տևողություն, ամիս
  - Կացարաններից դուրս եկած և 12 ամսվա ընթացքում կրկին համակարգ չվերադարձած շահառուների բաժին, %
  - Կացարանային աջակցության բավարարության մակարդակի գնահատական

- 1011-12011-«ՀՀ վերադարձող քաղաքացիների վերաինտեգրմանն ուղղված առաջնային ծրագիր»
  - Ծրագրից հետո կրկնակի սոցիալական աջակցության կարիք չունեցող շահառուների բաժինը, %

Միաժամանակ, ստորև ներկայացվում են «1011՝ Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների իրականացման ապահովում» բյուջետային ծրագրի՝ ՀՀ 2026թ. պետական բյուջեում ներառված որոշ միջոցառումների անվանումների, նկարագրությունների, ինչպես նաև արդյունքային չափորոշիչների լավարկման մի քանի առաջարկություններ՝ որոնք կարող են կիրառվել ՀՀ վարչապետի 2026թ. հունվարի 8-ի **թիվ 8-Ա որոշմամբ մեկնարկված 2027թ. բյուջետային գործընթացի բյուջետային ֆինանսավորման հայտերի մշակման փուլում՝**

1. 1011 բյուջետային ծրագրի 11007 «Սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման ծառայությունների տրամադրում» միջոցառման՝

- նկարագրությունը ձևակերպել հետևյալ խմբագրությամբ՝
  - Սոցբնակարանային ֆոնդի շենքերի բնակիչներին օրենսդրությամբ սահմանված ծառայությունների մատուցում, շենքերի պահպանման, տեխնիկական սպասարկման ապահովում, սոցիալական աջակցության ծրագրերով նախատեսված բնաիրային օգնության պահպանման և բաշխման կազմակերպում:
- Արդյունքային չափորոշիչները լրացնել հետևյալ նոր ցուցանիշներով՝
  - Սոցիալական աջակցության ծրագրերով ծառայություններ ստացած անձանց թիվը, մարդ
  - Սոցբնակֆոնդի բնակարանների զբաղվածության մակարդակը, տոկոս,
  - Բնակիչների գոհունակության մակարդակը ստացված սոցիալական ծառայություններից, տոկոս:

2. 11003 «Սոցիալական դեպքի վարման ծառայության ձեռք բերում» միջոցառման՝

- ՆկարագրությունըԱնվանումը ձևակերպել հհետևյալ խմբագրությամբ՝
  - Սոցիալական աշխատողի կողմից տնային այցելությունների միջոցով ընտանիքի, դրա յուրաքանչյուր անդամի սոցիալական գնահատում, անապահով սոցիալական խմբերին հայտնաբերելու համար:
- Արդյունքային չափորոշիչները լրացնել հետևյալ ցուցանիշներով՝
  - Շահառուներին հայտնաբերելուց հետո սոցիալական ծառայության տրամադրման միջին ժամկետը, օր, ամիս
  - Գնահատված կարիքներից սոցիալական ծառայություններ ստացողների կշիռը, տոկոս
  - Սոցիալական գնահատման արդյունքներից շահառուների բավարարվածության մակարդակը, տոկոս
  - Նույն ընտանիք տունայցերի կատարման հաճախականությունը, ամիս: